ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 մարտի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

47
(2713)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 15

Rank	City
1	Qingdao, Shandong, China
2	Abu Dhabi, United Arab Emirates
3	Doha, Qatar
4	Taipei, Taiwan (China)
5	Sharjah, United Arab Emirates
6	Quebec City, Canada
7	Dubai, United Arab Emirates
8	Zurich, Switzerland
9	Munich, Germany
10	Muscat, Oman
11	The Hague (Den Haag), Netherlands
12	Hong Kong, Hong Kong (China)
13	Ljubljana, Slovenia
14	Yerevan, Armenia
15	Zagreb, Croatia
16	Cluj-Napoca, Romania
17	Eindhoven, Netherlands
18	Canberra, Australia

Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը երկուշաբթի երեկոյան հրապարակել էր «հետազոտական Numbeo պորտալի կողմից հրապարակած» տվյալները՝ աշխարհի «ամենաանվտանգ» քաղաքների մասին, որտեղ Երեւանը զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը:

«Անվտանգության վարկանշային աղյուսակում ներառվել է ընդհանուր առմամբ 242 քաղաք: Հայաստանն այս հորիզոնականով առաջատար է տարածաշրջանում»,- գրել էր Չախոյանը:

Ըստ Numbeo-ի՝ իսկապես, Երեւանը 14-րդ «անվտանգ» քաղաքն է, ցանկը գլխավորում է Արեւելյան Չինաստանում գտնվող Ցինդաո քաղաքը, երկրորդ հորիզոնականում ԱՄԷ-ի մայրաքաղաք Աբու Դաբին է, իսկ երրորդը՝ Կատարի մայրաքաղաք Դոհան:

Խնդիրը, սակայն, ոչ թե Numbeo-ի հրապարակած ցանկն է, այլ դրա մեթոդաբանությունը. Fip.am-ը պարզել է, որ Numbeo-ն չունի վստահելի հարթակի համբավ, եւ դրա հրապարակած վարկանիշերը հիմնված չեն վիճակագրական տվյալների վրա: Դրանք կազմված են օգտատերերի աջակցությամբ եւ նրանց անանուն առաջարկությունների հիման վրա: Կայքում հրապարակված տվյալները կրկնակի ստուգում չեն անցնում, եւ չկա հրապարակված մեթոդաբանություն, թե ինչի հիման վրա են արվում հաշվարկները:

Numbeo-ի տվյալները հաճախ հայտնվել են նաեւ քննադատության կենտրոնում, իսկ հարթակը երբեք չի համարվել վստահելի վիճակագրական տվյալների կամ հետեւություններ անելու համար:

Նշենք, որ Չախոյանը միակը չէ, որ հղում է արել Numbeo-ի ոչ ճշգրիտ տվյալներին:

Այսպիսով, վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալի հրապարակած տվյալները վերցված են մի աղբյուրից, որը չունի արժանահավատ վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդաբանություն, հիմնված է օգտատերերի անանուն կարծիքների վրա, որոնք հեշտությամբ հնարավոր է մանիպուլացնել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի առողջական վիճակը Գերմանիայում վատացել է: Ինչպես օրեր առաջ հայտնել էինք, Ալեն Սիմոնյանը բակում մարզվելիս սայթաքել, վայր էր ընկել ու վնասել արմունկը, որից հետո «Նաիրի» բժշկական կենտրոնում նրան վիրահատել էին: Ձեռքը կոտրած եւ վիրահատած Ալեն Սիմոնյանը մարտի 27-ին գործուղվել էր Գերմանիա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գերմանիա գործուղման ընթացքում բարդություններ են առաջացել վնասված թեւի հետ կապված, ինչի պատճառով էլ ԱԺ նախագահը 1 օր շուտ է վերադարձել Երեւան, որպեսզի ապրիլի մեկին կրկին վիրահատվի: Հավելենք, որ պաշտոնական լուսանկարներում երեւում է՝ Սիմոնյանը վիրակապերով էր մասնակցում գերմանացի գործընկերների հետ հանդիպումներին:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը գնացել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: «Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից տեղեկացավ, որ մարտի 21-ին, երբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն մտավ Երեւանի քաղաքապետարան ու ձերբակալեց քաղաապետարանի պաշտոնյաներին, նրանց հետ կոմիտե է շտապել նաեւ մի քանի օր առաջ պաշտոնից ազատված Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ նրան նախաքննական մարմինը չի կանչել, այլ Սարգսյանն ինքն է գնացել ձերբակալվածների կողքին լինելու նպատակով եւ զարմացել, թե այս ինչ է կատարվում, ինչու են իր նախկին գործընկերներին զանգվածաբար բերման ենթարկել: Այս տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պարզել նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանից, որն ի պատասխան ասաց. «Ես բոլոր իմ գործընկերների համար էլ անհանգստանում եմ»: Ըստ էության, նա ո՛չ հերքեց, ո՛չ էլ հաստատեց մեր ունեցած տեղեկությունը: Հիշեցնենք, որ մարտի 21-ին կոմիտեն հայտնեց, որ քննվող չարաշահումների գործով Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի նախկին ղեկավար Սեյրան Մեջլումյանին, որը 2 օր առաջ է դիմում գրել եւ ազատվել աշխատանքից, եւ Ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության պետի ԺՊ Դավիթ Դալլաքյանին:

ՀՀ Ազգային ժողովում ներկայացվել են նոր նախագծեր, եւ հաջորդ նստաշրջանին, հնարավոր է, քննարկվեն դրանք. այդ նստաշրջանում նաեւ ընտրություններ են սպասվում: Խորհրդարանում դատավորներ կընտրվեն: Մասնավորապես, Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի դատավորների 3 թափուր տեղերի համար առաջադրել է 3-ական թեկնածու: Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրվել են Արմեն Դանիելյանը, Ելիզավետա Դանիելյանը, Արսեն Նիկողոսյանը: Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրվել են Կարեն Աղաջանյանը, Լիզա Գրիգորյանը եւ Կարեն Թումանյանը, իսկ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի թափուր տեղի համար առաջադրվել են Վահագն Թորոսյանը, Լիլիթ Խաչատրյանը եւ Անի Մխիթարյանը: Իսկ ովքե՞ր են նրանք. Անի Մխիթարյանը ԲԴԽ անդամ է, ում ժամկետը լրանում է հաջորդ ամիս: Նա իշխանությունների սրտի թեկնածուն է: Դատավոր Լիզա Գրիգորյանը ՔՊ պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանի ընկերուհին է. չի բացառվում, որ նա եւս լինի ՔՊ սրտի թեկնածուն: Արմեն Դանիելյանը իշխանության սրտի կալանք տվող դատավորներից է, նրանց սրտի մյուս թեկնածուն: Եվ չնայած խորհրդարանում ընտրություն կլինի, սակայն ՔՊ-ում նախապես են որոշում, թե որ պաշտոնում ում կընտրեն: Նրանց սրտի թեկնածուներին արդեն դուք իմացաք:

ՍԽԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱԿԱՆՋԻՆ ՓՍՓՍԱՑԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի ու Արցախի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների շուրջ զրուցել է ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբյանի հետ:



-Պարոն Զուրաբյան, Արցախի շուրջ օղակը գնալով սեղմվում է, իրավիճակն այնտեղ օրեցօր սրվում է: Ադրբեջանը երեկ առաջխաղացման հերթական փորձն արեց Արցախում՝ փակելով Գորիս-Ստեփանակերտ մայրուղին Աղավնո եւ Տեղ գյուղերի արանքում: Հակառակորդի նպատակը պարզ է, իսկ որո՞նք պետք է լինեն մեր հակաքայլերը, ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկենք Ադրբեջանին զսպելու համար:

-Ես Նիկոլ Փաշինյանի քաղաքականությունը կբնորոշեի որպես մի քաղաքականություն, որը բացարձակ անպաշտպան է թողնում սեփական ժողովրդին առաջացած մարտահրավերների առջեւ: Առաջին հերթին այս ամենը սխալ քաղաքականության եւ միջազգային հարաբերությունների հետ է կապված: Ռուսաստանն ու Արեւմուտքը հետապնդում են հակասական նպատակներ, Արեւմուտքն իր շահերն ունի այս ռեգիոնում, իսկ Ռուսաստանը՝ իր: Հայաստանը կրկնում է Ադրբեջանի 90-ականների սխալը, ընտրել է շատ միակողմանի՝ Արեւմուտքի վրա հենվելու քաղաքականություն: Հասկանալի է, որ Ռուսաստանի վարած քաղաքականությունը, ռուս խաղաղապահների գործունեությունն Արցախում ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնց համար մենք կարող ենք պահանջներ ներկայացնել, դժգոհել, բայց Հայաստանում սա վերածվել է արդեն Ռուսաստանի մերժման քաղաքականության: Որպես օրինակ՝ ԵՄ դիտորդական առաքելության հրավիրման հարցը: Արեւմուտքն առաջարկեց, որ իր դիտորդական առաքելությունը տեղակայվի հայ-ադրբեջանական սահմանին, Հայաստանն այս առաջարկն ընդունեց. ես համարում եմ, որ սա ճիշտ քայլ է, բայց սա չի նշանակում, որ պետք էր մերժել ՀԱՊԿ առաքելությունը, որն առաջարկում էր եւ՛ ռազմական, եւ՛ դիտորդական առաքելություն: Ընդ որում՝ այդ մերժումը կատարվեց շատ տարօրինակ ձեւակերպումով: Հայաստանի իշխանություններն ասում են, թե ՀԱՊԿ-ը չի ասում՝ որ սահմանին պետք է կանգնեն, իսկ ԵՄ-ն ասո՞ւմ է. սա մի քիչ տարօրինակ հարցադրում է: Մենք եթե անգամ դժգոհ ենք եւ իրավունք էլ ունենք դժգոհելու ՀԱՊԿ-ի քաղաքականությունից, այս մերժումը այն ֆոնին, որ ընդունում ես ԵՄ դիտորդներին, նշանակում է միակողմանի վերաբերմունք:

-Պարոն Զուրաբյան, Մոսկվան բավականին կոշտ արձագանքել է Հայաստանի կողմից Հռոմի փաստաթղթի վավերացման գործընթաց սկսելուն: Ի՞նչ հետեւանքներ սա կունենա հայ-ռուսական հարաբերությունների վրա, Մոսկվան կոշտ քայլերի կգնա՞:

-Մեզ փորձում են բացատրել, որ Հռոմի ստատուտը Հայաստանը վավերացնում է, որպեսզի ինչ-որ կարեւոր գործիք ունենա՝ Ադրբեջանին միջազգային ատյաններում պատասխանատվության ենթարկելու համար: Ես չեմ պնդում՝ ՍԴ-ն միտումնավոր է ընտրել այս ժամանակահատվածը, բայց փաստ է, որ սա արվում է մի կոնտեքստում, երբ միջազգային քրեական դատարանը Պուտինին ձերբակալության հրաման է տալիս: Այս կոնտեքստում նման բան անելն արդյոք չի՞ նշանակում, որ մեր իշխանությունները թերագնահատում են հնարավոր վտանգները եւ շարունակում են միակողմանի քաղաքականությունը: Այսինքն՝ ամեն ինչում կանգնել արեւմտյան ճամբարում եւ մերժել այն ամենը, ինչ գալիս է Ռուսաստանից կամ ՀԱՊԿ-ից, սխալ է: Պետք է հասկանալ՝ ինչ են մտածում, որ նման քայլերի են գնում մեր իշխանությունները: Փաշինյանի ականջին, հավանաբար, փսփսացել են, որ ՌԴ-ի հետ թշնամանալուց հետո արեւմտյան դեսանտը լցվելու է Հայաստան եւ զբաղվելու է հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ: Չգիտեմ՝ Փաշինյանը կարող է նման բանի հավատալ, բայց ես անձամբ որեւէ հիմք չունեմ հավատալու:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆՈՐ ԱՐՇԱՎ՝ ԳՈՒՐԳԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԴԵՄ

Արցախում նոր պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի դեմ, կարծես թե, արշավ է սկսվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ շատերը հույս ունեն, թե Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանին ճնշելով՝ կկարողանան ազատվել Գուրգեն Ներսիսյանից: Ինչպես հայտնի է, այս օրերին Արցախում է գտնվում Սամվել Բաբայանը, որը հանդիպումներ է ունենում համայնքների բնակիչների հետ ու, ըստ ականատեսների, նաեւ վիրավորական արտահայտություններ է թույլ տալիս պետական նախարարի հասցեին: Պետական նախարարի գործունեության մասին որոշակի դժգոհություններ է արտահայտել նաեւ Ռուբեն Վարդանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Արցախի պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի հետ, որը կարճ հեռախոսազանգի ընթացքում ընդամենը ասաց հետեւյալը. «Ծայրաստիճան ծանրաբեռնվածության պատճառով չեմ հասցնում հետեւել լրատվամիջոցների հրապարակումներին, սակայն իմ համար մի բան հստակ է. իմ գործունեության ընթացքում արտոնյալներ կամ նման զգացում ունեցողներ չեն լինելու, դրա հետ պետք է հաշտվեն բոլորը, իսկ դրան հասնելու համար մեծ աշխատանք պիտի կատարվի: Պետական նախարարի պաշտոնում աշխատելու մեկամսյա ժամկետում ես այնքան բացահայտումներ եմ արել եւ այնպիսի երեւույթներ տեսել, որ եթե ես սկսեմ այդ ամենի մասին բարձրաձայնել, շատերի մոտ անսահման հիասթափություն կառաջանա, բայց ես նախընտրել եմ ուղիղ նայել առկա խնդիրներին ու առաջ գնալ դրանք լուծելու ճանապարհով: Համոզված եմ՝ ինձ չեն ուզում դրդել ընտրել հակառակ մոտեցումը: Առաջիկայում բազմաթիվ ցավոտ որոշումներ ու գործողություններ են լինելու, որոնց մի մասը կանխատեսելի է, որոշները շատերի համար՝ ոչ: Կառավարության գործունեության կամ իմ անձի դեմ ուղղված քննադատությունները հետապնդում են այդ ամենին դիմակայելու նպատակ, սակայն ուզում եմ բոլորին հավաստիացնել, որ դրանք ապարդյուն են»: Սամվել Բաբայանից ու Ռուբեն Վարդանյանից այս մասով մեկնաբանություն ստանալ չհաջողվեց:

Ն.Հ.

ՆԻՍՏ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

Երեկ կառավարության նիստում հավանության արժանացավ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» եւ ««Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Այդ գործող օրենքներով սահմանվում է, որ համայնքների բյուջեների ֆոնդային մասը, ի թիվս այլ եկամուտների, ներառում է իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից եւ օտարումից ստացված միջոցները: 2006 թվականից ի վեր Կառավարությունը հավանություն է տվել շուրջ 35 նման ծրագրի: Խոշորացումից հետո համայնքների ՏԻՄ-երին փոխանցվելու են նոր լիազորություններ, որոնց իրականացման համար պետությունը պարտավոր է սահմանել ֆինանսական եկամուտների աղբյուրներ: Այդ ֆինանսական եկամուտների աղբյուր կարող է հանդիսանալ նաեւ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից պետական սեփականություն համարվող հողերի մասնավորեցումից եւ օտարումից ստացված միջոցներից համայնքներին 30 տոկոսի չափով փոխանցումները: Օրենքների ընդունմամբ համայնքների բյուջեները կհամալրվեն ֆինանսական միջոցների նոր աղբյուրով, այն է՝ համայնքի տարածքում օտարվող հողերից ստացված ֆինանսական միջոցներից 30 տոկոսի չափով մասհանումներով, ինչը թույլ կտա համայնքներին իրականացնել նոր ապակենտրոնացված լիազորություններ, ինչպես նաեւ ավելի մեծ ծավալով կյանքի կոչել բնակչության խմելու եւ ոռոգման ջրի, համայնքային նշանակության ճանապարհների, մանկապարտեզների, ինչպես նաեւ այլ ենթակառուցվածքների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր: Օրենքների կիրարկման ընթացքում պետական բյուջեում եկամուտները կնվազեն, նույնքանով համայնքների բյուջեների եկամուտները կավելանան:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԵԹԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ

Ադրբեջանը հերթական ներխուժումն է իրականացրել Արցախում:

Ադրբեջանական զինուժը երեկ գիշերը փակել է Գորիս-Ստեփանակերտ մայրուղին՝ Աղավնո եւ Տեղ գյուղերի արանքում. այս մասին հայտնել է ԱՀ ներքին գործերի նախարարությունը:

Հաղորդագրությունում ասվում է, որ արդեն պատրաստ է փակված ճանապարհը շրջանցող՝ Սյունիքի մարզի Տեղ-Կոռնիձոր գրունտային նոր ավտոճանապարհը, որը միանում է 2022թ. օգոստոսին շահագործման հանձնված նոր՝Կոռնիձոր-Հին շեն ճանապարհին:

ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը մանրամասներ է ներկայացրել՝ինչ իրավիճակ է Արցախում: «Ադրբեջանը փակել է Տեղ գյուղից Աղավնո ընկած հատվածը, որով մենք անցնում էինք, որպեսզի հասնեինք Արցախ. հիմա իրենք թույլ չեն տալիս տեղաշարժվել այդ հատվածով: Հայաստանի իշխանությունների եւ ադրբեջանական կողմի միջեւ կար պայմանավորվածություն, որ մինչեւ ապրիլի 1-ը պետք է պատրաստ լիներ Կոռնիձեր-Հին շեն ճանապարհը, եւ արդեն այդտեղով պետք է լիներ երթեւեկությունը, բայց, ինչպես միշտ, Ադրբեջանը խախտել է պայմանավորվածությունը եւ երկու օր շուտ է փակել այդ ճանապարհը »,-ասում է Արցախի ԱԺ պատգամավորը:

ԱՊՕՐԻՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ եւս մեկ հայցադիմում մարտի 23-ին ընդունվել է Հակակոռուպցիոն դատարանի վարույթ:

Գլխավոր դատախազության՝ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին «Սթոնս» ՍՊ ընկերության ղեկավար Ս.Ա.-ից, նրա հետ փոխկապակցված 3 անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոցում գտնվող 3 անշարժ գույք, Ավան վարչական շրջանի Աճառյան փողոցում գտնվող 1 անշարժ գույք, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 296 մլն դրամ,
- Մաշտոցի պողոտայում գտնվող անշարժ գույքի միջին շուկայական արժեքի չափով գումար՝ 135 մլն 740 հազար դրամ,
- «ԾՈՒՊԱՆԻ» ՓԲԸ-ի 33.334 հատ բաժնետոմսերի ձեռք բերման արժեքը՝ 56 մլն 909 հազար 394 դրամ,
- 10 հանձնված փոխառությունների չվերադարձված մասերի պահանջի իրավունք՝2 մլրդ 72 մլն 182 հազար 335 դրամի չափով,
- 5 մլրդ 180 մլն 867 հազար 198 դրամ՝ որպես ստացված ապօրինի եկամուտների մնացորդ,
- 1 մլրդ 706 մլն 303 հազար 920 դրամի չափով գումար, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել:

ArmLur.am-ին հասած տեղեկություններով՝ վերոնշյալ անձը Սուրեն Ավագյանն է:

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳԴՀ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

«Գերմանիայի Դաշնային Հանրապետություն աշխատանքային այցի շրջանակում ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակության կազմում մարտի 28-ին հանդիպեցինք ԳԴՀ Բունդեսթագի նախագահ Բերբել Բասին»,- ֆեյսբուքյան գրառում է արել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Տիկին Բերբել Բասին ներկայացրի Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության լիակատար շրջափակման հետեւանքով ստեղծված իրավիճակը, Ադրբեջանի կողմից էթնիկ զտման քաղաքականության իրականացման փորձերն ու միջազգային իրավակարգի կոպտագույն խախտումները, որոնց վառ ապացույցներից մեկն էլ Արդարադատության միջազգային դատարանի որոշման անտեսումն է:

Այս համատեքստում խոսեցի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին, որի ճանաչումը միջազգային հանրության կողմից օրվա հրամայականն է:

Նկարագրեցի, թե ինչպես «բնապահպանական ակտիվիստների» անվան տակ փակվեց Բերձորի միջանցը, սակայն Արցախի իշխանության կողմից Կաշենի հանքավայրի գործարկման կասեցումից հետո էլ ճանապարհը չի բացվում: Այժմ Ադրբեջանը պատճառաբանում է, թե հայերը զենք են տեղափոխում Արցախ, պետք է սքաներ տեղադրվի:

Բունդեսթագի նախագահին փոխանցեցի Արցախի Հանրապետության պետնախարար Գուրգեն Ներսիսյանի ուղերձը՝ իբրեւ Արցախի կառավարության տեսակետ, որ Արցախը պատրաստ է չեզոքացնել ադրբեջանական կեղծ մտահոգություններն առ այն, որ, իբր, Հայաստանից զենք է տեղափոխվում Արցախ, որի ստահոդ լինելը կարող էր բացահայտել ռուս խաղաղապահների կողմից առաջարկված՝ բեռնատարների համար սքաներ սարքի տեղադրումը Գորիսից Արցախ եկող ճանապարհին, սակայն Ադրբեջանը դրան եւս համաձայն չէ:

Արցախի կյանքի ճանապարհը շարունակում է մնալ փակ, որովհետեւ այդկերպ Ադրբեջանը փորձում է ապահովել իր հիմնական նպատակները՝ ճնշումներով, բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով Արցախի բնակչության հպատակեցումը:

Պետնախարարը նշել էր, որ նույնիսկ պատրաստ էին այդպիսի կառուցողական քայլերի, թեեւ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ միջանցքի նկատմամբ ողջ վերահսկողության գործառույթը ստանձնել էին ռուս խաղաղապահները, եւ նրանց չվստահելու որեւէ պատճառ չկար:

Ներկայացրի հետպատերազմյան Հայաստանի Հանրապետությունում անվտանգային խնդիրներն ու ՀՀ սահմաններում առկա լարված իրավիճակը, մարդու ամենասուրբ՝կյանքի, ապրելու իրավունքի իրացմանը խոչընդոտող խնդիրները: Հիշատակեցի ՀՀ պետական սահմանին, ինչպես նաեւ Արցախում իրենց ծառայությունն իրականացնելու ընթացքում թշնամու կրակոցներից զոհված զինծառայողների մասին:

Անդրադառնալով Հայաստանում ժողովրդավարությանը՝ մատնանշեցի առկա խնդիրներն ու մարտահրավերները»,-եզրափակում է պատգամավորը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԻՄԵԼ Է ԻՇԽՈՂ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու առաջադրված Էդգար Ղազարյանը հանդիպման առաջարկով դիմել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը: Այս մասին Էդգար Ղազարյանը հայտնել է «Ֆեյսբուք»-ի իր էջում կատարած գրառմամբ:

«Այսօր, որպես Ազգային ժողովում «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում առաջադրված միասնական թեկնածու, պաշտոնապես դիմել եմ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավարին (նաեւ քարտուղարին, որը հանդիսանում է նաեւ ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ)՝ կազմակերպելու համար իմ հանդիպումը խմբակցության պատգամավորների հետ:

Իմ կողմից առաջարկվել է հանդիպման բաց եւ հրապարակային ձեւաչափը՝ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ, ուղիղ եթերով հեռարձակման հնարավորությամբ: Միաժամանակ ընդունելի է համարվել իրենց կողմից առաջարկվող այլ ձեւաչափով հանդիպման հնարավորությունը»,- գրել է Ղազարյանը:

«ԳՈԼԴ» ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐ

Ներքին գործերի նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ: Նախարարությունն առաջարկում է փոխել ավտոմեքենաների այսպես կոչված «գոլդ» համարանիշների տրամադրման կարգը: Ըստ այդմ՝ հերթական համարանիշերը հատկացվում են պետական տուրքի վճարման դիմաց, իսկ ցանկալի, մեծ պահանջարկ ունեցող համարանիշները՝ 36 000- 8.000.000 դրամով՝ կախված համարանիշի տառային եւ թվային համադրություններից: Նախագծով առաջարկվում է նախատեսել նոր տեսակի չափորոշիչ ունեցող համարանիշ, որն իր արժեքով եւ տառերի ու թվերի համադրությունների արդյունքում կտարբերվի մեծ պահանջարկ ունեցող համարանիշերից, եւ որոնց օգտագործելու առաջնահերթության իրավունքը ստանալու համար կիրականացվի աճուրդ: Աճուրդի մեկնարկային գներն ու անցկացման կարգը նախագծի ընդունման դեպքում սահմանելու է կառավարությունը: Ընդունվելու դեպքում նոր օրենքն իրավական ուժ կստանա պաշտոնական հրապարակումից 3 ամիս հետո:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ: Զրուցակիցները քննարկել են Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով

շարունակվող ճգնաժամին առնչվող հարցեր: Մտքեր են փոխանակվել վերջին զարգացումների, Հայաստան-Ադրբեջան

բանակցային գործընթացի, խաղաղության օրակարգի շուրջ: Կողմերը կարեւորել են տարածաշրջանում կայունության ու խաղաղության ապահովման ուղղությամբ հետեւողական ջանքերը:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԵԾԵԼ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ 2022 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Նորապատ-Հայկավան ավտոճանապարհի 2-րդ կմ-ի հատվածում ՀՀ Արարատի մարզի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչության թիվ 9 բաժնի պետ Սպարտակ Ղազարյանի կողմից վարվող «Մերսեդես» մակնիշի, 35 RR 058 հ/հ-ի եւ ՀՀ ֆինչական կոմիտեի Արմավիրի մարզային ֆինչական վարչության ավագ ֆինիչ Լիլիթ Պապիկյանի կողմից վարվող «Հոնդա» մակնիշի, 35 QC 747 հ/հ-ի ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Վթարի պատճառների եւ դրանում մեղավոր լինելու վերաբերյալ հարցերի շուրջ Սպարտակ Ղազարյանի եւ Լիլիթ Պապիկյանի միջեւ ի հայտ եկած անհամաձայնության պատճառով վերջինս ժամը 12:10-ի սահմաններում զանգահարել եւ վթարի վայր է կանչել հորը՝Հրաչյա Պապիկյանին:

Կատարվածի մասին Հրաչյա Պապիկյանի միջոցով տեղեկացել եւ դեպքի վայր են մեկնել նաեւ վերջինիս որդին՝ Նարեկ Հրաչյայի Պապիկյանը, եղբայրը՝ Սմբատ Ալբերտի Պապիկյանը, ինչպես նաեւ Ալբերտ Վաչագանի Պապիկյանը եւ քննությամբ ինքնությունները չպարզված այլ անձինք:

Սմբատ Պապիկյանը մինչեւ դեպքի վայր հասնելը զանգահարել եւ դեպքի մասին տեղեկացրել է որդուն՝ Արման Պապիկյանին, որը դեպքի վայր է գնացել Գրիգոր Հովհաննեսի Կարապետյանի եւ Ավետիք Կամոյի Անտոնյանի հետ:

Հասնելով վթարի վայր՝Ալբերտ Պապիկյանը Ավետիք Անտոնյանի, Արման Պապիկյանի, Նարեկ Պապիկյանի, Հրաչյա Պապիկյանի, Սմբատ Պապիկյանի, Գրիգոր Կարապետյանի, Լիլիթ Պապիկյանի եւ մյուսների հետ շուրջ 20 րոպե հասարակության եւ բարոյական նորմերի նկատմամբ ցուցաբերել է բացահայտ անհարգալից եւ արհամարհական վերաբերմունք, որը դրսեւորվել է Սպարտակ Ղազարյանին, Լիաննա Դանիելյանին եւ Արգիշտի Դանիելյանին ստորացնելով, այն է՝ դեպքի վայրում հավաքված անձանց, ինչպես նաեւ Սպարտակ Ղազարյանի եւ Լիաննա Դանիելյանի անչափահաս երեխաների ներկայությամբ խմբի մյուս անդամների հետ ֆիզիկական ներգործություն է կիրառել Սպարտակ Ղազարյանի եւ Արգիշտի Դանիելյանի նկատմամբ՝ ձեռքերով եւ ոտքերով հարվածներ է հասցրել վերջիններիս՝ նրանց առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ, ինչպես նաեւ հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ է հնչեցրել վերջիններիս հասցեին:

Մասնավորապես, Ալբերտ Պապիկյանը խմբի մյուս անդամների հետ ձեռքերով եւ ոտքերով նախ հարվածներ է հասցրել Սպարտակ Ղազարյանի մարմնի տարբեր հատվածներին՝ գլխին, որովայնին՝ առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ, որից հետո խմբի մյուս անդամների հետ ձեռքերով եւ ոտքերով հարվածներ է հասցրել նաեւ Արգիշտի Դանիելյանի գլխի եւ որովայնի հատվածներին՝ առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ, որից հետո խմբի մյուս անդամների հետ Արգիշտի Դանիելյանին գցել են գետնին եւ հարվածներ հասցրել նաեւ վերջինիս, այնուհետեւ կրկին հարվածներ են հասցրել Արգիշտի Դանիելյանին օգնության հասած Սպարտակ Ղազարյանին:

Դեպքի ընթացքում խմբի անդամները հարվածներ են հասցրել նաեւ Լիաննա Ղանիելյանին՝ պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ:

Վերոհիշյալ եղանակներով Ալբերտ Պապիկյանը եւ խմբի մյուս անդամները շուրջ 20 րոպե նաեւ խոչընդոտել են Արմավիրի մարզի Նորապատ-Հայկավան ավտոճանապարհի բնականոն երթեւեկությունը, խախտել են երթեւեկող մարդկանց անդորրը, ինչպես նաեւ խոչընդոտել են դեպքի վայրի հարակից հատվածում տեղակայված «Երվանդ եւ Սամսոն» ՍՊ ընկերությանը պատկանող ավտոգազալցաճանապարհային կայանի բնականոն աշխատանքը: Գործը դատարանում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

ՏԱՐԲԵՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՊԱՀԵԼ

ՀՀ ֆինչական կոմիտեի ԵՔԲՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ֆինչական բաժնում պարզվել են իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների շրջանառության նոր դեպքի էական հանգամանքներ:

Մասնավորապես, 2023թ. մարտի 23-ին ոստիկանության Էրեբունու բաժնի ՔՀ բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ սպիտակ գույնի «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւան քաղաքի Կենտրոնական գերեզմանատան տարածքում տեղադրում է թմրամիջոցներ:

Նույն օրը, ստացված տվյալներն իրացնելու արդյունքում, Կենտրոնական գերեզմանատան մուտքի դիմաց՝նկատվել, ապա հարակից շենքերից մեկի մոտ կանգնեցվել է նշված մակնիշի ավտոմեքենան, որի ուղեւորը դիմել է փախուստի:

Վարորդը, որը Երեւան քաղաքի 28-ամյա բնակիչ է, տեղում խոստովանել է, որ ավտոմեքենայի սրահում առկա են Մարիխուանա տեսակի թմրամիջոցների պարունակությամբ փաթեթներ, որոնք ինքը եւ փախուստի դիմած ընկերը ձեռք են բերել «Տելեգրամ» հավելվածի միջոցով եւ գումարի դիմաց տեղադրում են Երեւան քաղաքի տարբեր վայրերում:

2023թ. մարտի 23-ին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով եւ 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դեպքի վայրի զննության ընթացքում 28-ամյա երիտասարդը մատնացույց է արել Երեւան քաղաքում գտնվող 3 տարբեր վայրեր, որտեղ փախուստի դիմած 26-ամյա ընկերոջ հետ տեղադրել են փաթեթներով թմրամիջոցներ: Տեղադրված փաթեթները հայտնաբերվել են, ավտոմեքենայի սրահից հայտնաբերվել է թմրամիջոցի նմանվող զանգվածի պարունակությամբ թվով 33 փաթեթ՝ընդհանուր 52,14 գրամ քաշով: Համաձայն փորձաքննության արդյունքների՝ փաթեթներում առկա զանգվածը եղել է Մարիխուանա թմրամիջոց:

Փախուստի դիմած 26-ամյա տղամարդը հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, երկու երիտասարդները ձերբակալվել են՝ հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով:

Քննիչի կողմից դատախազին ներկայացված՝ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ միջնորդության բավարարման արդյունքում երիտասարդներին մեղադրանք է ներկայացվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում թմրամիջոցների ապօրինի ձեռք բերման աղբյուրները, ապօրինի շրջանառության մեջ ներգրավված հնարավոր այլ անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՂՈՒԹՅԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 28-ի երեկոյան ոստիկանության Թումանյանի բաժնում Ալավերդի քաղաքի մի բնակիչ հաղորդում էր տվել, որ անցած օրվա ընթացքում, երբ իրենք տանը չեն եղել, բացել են մուտքի դուռը եւ ննջարանի պահարանում դրված գիպսե դրամապահոցները ջարդելով՝ գողացել են ավելի քան մեկուկես միլիոն դրամ եւ 16 հազար ռուսական ռուբլի: Ընդ որում՝ դուռը բացել ու փակել էին հարմարեցված բանալիով՝ առանց վնասելու կողպեքը:

Դեպքի վայր են մեկնել բաժնի օպերատիվ խումբը, փորձագետ ու քննիչ: Ձեռնարկվել են անհետաձգելի գործողություններ՝ հանցագործությունը բացահայտելու եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաձեռնվել է քրեական վարույթ, իրականացվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, սակայն ամեն մի փաստ ճշտելուց հետո պատասխանների փոխարեն առաջանում էին նոր հարցեր: Արդեն հաջորդ օրը ստացվեց գլխավոր պատասխանը: Պարզվեց, որ կատարվածը ոչ թե գողություն էր, այլ գողության բեմականացում, իմիտացիա: Ձեռնարկված միջոցառումներով հիմնավորվեց, որ մոտ մեկուկես տարի է, ինչ հաղորդում տվողի կինը տեւական ժամանակ ամուսնու աշխատավարձից դրամապահոցներում հավաքած գումարներից պարբերաբար գաղտնի հանել է տարբեր գումարներ կամ ամուսնուն խաբելով՝ պահոցների մեջ ընդհանրապես գումար չի գցել ու փողը ծախսել է պարտք փակելու կամ կենցաղային այլ հարցեր լուծելու համար: Եվ որպեսզի ամուսնու հետ խնդիրներ չառաջանան, մարտի 27-ին խառնել-գետնին է թափել ննջասենյակի իրերը, կոտրել է դրամապահոցները, վերցրել մնացած 100 հազար դրամն ու 16 հազար ռուբլին, իր բանալիով փակել տան դուռն ու մանկահասակ դստեր հետ մեկնել է ամուսնու մոտ՝նրա հայրական տուն: Հաջորդ օրը ընտանիքով վերադարձել են Ալավերդի, եւ ոչինչ չկասկածող ամուսինը դիմել է ոստիկանություն: Իսկ ոստիկանության խնդիրը իրականության բացահայտումն է: Կինը խոստովանել է արարքը: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի տեսուչները ստուգում են իրականացրել «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ում, որի ընթացքում առկա արտադրատեսակներից կատարվել է նմուշառում եւ ներկայացվել լաբորատոր փորձաքննության (Շիրակի մարզ, գ. Առափի): Փորձարկման արդյունքում պարզվել է, որ «Պանիր լոռի» արտադրատեսակի նմուշն աղիքային ցուպիկի խմբի մանրէներ (ԱՑԽՄ) ցուցանիշով չի համապատասխանել «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝կասեցվել է «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ի «Պանիր լոռի» արտադրատեսակի արտադրական գործունեությունը մինչեւ հայտնաբերված խախտումները վերացնելը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԱՌԱՆՑ ԱՆՏԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՀՀ անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել: Հարցման մեջ, ի թիվս այլ հարցերի, հետեւյալ հարցադրումն եմ արել. Տավուշի մարզի տարածքում գործող անտառտնտեսություններում որքա՞ն է կազմում անտառապահի աշխատավարձը, որո՞նք են անտառապահների աշխատանքային ժամերը եւ օրերը, երեկոյան եւ գիշերային ժամերին ովքե՞ր եւ ինչպե՞ս են կատարում անտառների պահպանությունը: Հարցերից մեկն էլ հետեւյալն էր՝ անտառտնտեսությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների ժամանակ, որպես տնօրենների թեկնածուներին ներկայացվող պարտադիր պահանջ, ինչո՞ւ ներառված չէ նրանց՝ անտառագիտական կամ բնագիտական բարձրագույն կրթություն ունենալը:

Անտառային կոմիտեից ստացված պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում անտառապահների ամսական աշխատավարձը կազմում է 140.000 (Հարյուր քառասուն հազար) դրամ: «Հայանտառ» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ, երկու հանգստյան օրով՝ շաբաթ եւ կիրակի: Աշխատանքային օրը սկսվում է ժամը 9.00-ին եւ ավարտվում է ժամը 18.00-ին: Երեկոյան եւ գիշերային ժամերին անտառներում հսկողություն չի իրականացվում»:

Հարց է ծագում՝ այդ դեպքում ինչո՞ւ են անտառապահները պատասխանատվություն կրում իրենց հսկողությանը հանձնված տեղամասերում շաբաթ-կիրակի օրերին եւ գիշերային ժամերին անհայտ անձանց կողմից հատված ծառերի համար: Մյուս հարցադրմանը Անտառային կոմիտեից հետեւյալ պատասխանն են տվել. ««Հայանտառ» պետական ոչ առեւտրային կազմակերպության Տավուշի մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգը 2020թ. դեկտեմբերի 17-ին «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի թիվ 154 հրամանով ուժը կորցրած է ճանաչվել: Անտառտնտեսության մասնաճյուղերում տնօրեններն աշխատանքի են ընդունվում «Հայանտառ» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի հրամանով, առանց մրցույթի»: Անտառտնտեսության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգը 2020թ.-ին չեղյալ են համարել, որպեսզի առանց որեւէ արգելքի «յուրայիններին» նշանակեն այդ պաշտոնին: Ուշագրավ է, որ ՀՀ անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանը եւ այդ կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սերգո Աթանեսյանը անտառագիտական կամ բնագիտական կրթություն չունեն, մինչ այդ պաշտոններին նշանակվելն անտառային ոլորտում աշխատանքային փորձ ընդհանրապես չեն ունեցել: Կարեւոր մի հանգամանք. Վլադիմիր Կիրակոսյանը եւ Սերգո Աթանեսյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներ են:

ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏՎԵԼ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐ ՄԱՐՄԻՆ

Գործադիրը հավանություն է տվել ««Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ ««Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին: Օրենքների նախագծերի ընդունումը հնարավոր կդարձնի ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի համապատասխանեցումը բարձրագույն կրթության եւ գիտության զարգացման արդի վիճակին եւ միջազգային չափանիշներին, կնպաստի այդ ոլորտների առաջընթացին եւ դինամիկ զարգացմանը: Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բնագավառի իրավահարաբերությունների բարելավման եւ արդիականացման նպատակով նախատեսվում է ստեղծել պետական կառավարման համակարգի նոր մարմին՝ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե:

Ինչպես նշել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ կառավարության ծրագրով՝ բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտների որակական զարգացումն առաջնահերթություն է, որի շրջանակում իրականացվել է մեծածավալ աշխատանք. «Կառավարությունը, 2018 թվականի համեմատ, գիտության ոլորտի ֆինանսավորումն այս տարվա համար ավելացրել է 21,74 մլրդ դրամով՝ այն դարձնելով 36 մլրդ դրամ, որը 2.5 անգամ ավելի է 2018 թվականին տրամադրված ֆինանսավորումից: Գիտության ոլորտում մեկնարկել է գիտաշխատողների ատեստավորման եւ վարձատրության բարձրացման ծրագիրը, որի արդյունքում, օրինակ, ամենամեծ թվով գիտնականներ ընդգրկող տարակարգի՝ գիտական աշխատողների բազային աշխատավարձը նախկինում միջինը 90 հազար դրամի փոխարեն 2022 թվականին կազմել է 150 հազար դրամ, 2023 թվականին՝ 250 հազար, 2025 թվականին արդեն փուլային աճման սկզբունքով կկազմի 276 հազար դրամ: Առաջատար գիտաշխատողների պարագայում, օրինակ, արդեն 2022 թվականից ունեինք ավելի քան կրկնապատկված աշխատավարձ՝ 114 հազար դրամի փոխարեն 250 հազար դրամ: 2023-ին առաջատար գիտաշխատողների աշխատավարձը 350 հազար դրամ է, իսկ 2025-ին կլինի 443 հազար դրամ»:

Նախարարի խոսքով՝ մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում գիտական ենթակառուցվածքների եւ սարքավորումների ձեռք բերման, գիտության ոլորտում սերնդափոխության, արտերկրից հեղինակավոր գիտնականների ներգրավման ուղղությամբ՝ թիրախային դրամաշնորհային ծրագրերի միջոցով, որոնք արդեն ունեն տեսանելի արդյունքներ:

Նիկոլ Փաշինյանը կարեւորել է օրինագծի ընդունումը եւ մեկ անգամ եւս ընդգծել, որ, առանց կրթության ոլորտում խորը եւ բովանդակային փոփոխությունների, որոնք կբերեն կրթության որակի եւ արդյունավետության բարձրացմանը, հնարավոր չի լինի ապահովել երկրի ապագան: «Այդ իմաստով մենք, իհարկե, շատ մանրամասն հետազոտել ենք այն գործընթացները, որոնք տեղի են ունեցել, կամ այն պրոբլեմները, որոնք մենք ունենք բարձրագույն կրթության ոլորտում: Դրանցից են ֆիզիկական ենթակառուցվածքների բովանդակային հատվածի անհամապատասխանությունը ժամանակակից չափանիշներին: Մենք արձանագրել ենք հետեւյալը, որ, ցավոք, չենք նկատել, թե ինչպես է բուհական համակարգը շարունակաբար մեկուսանում հետազոտական բաղադրիչից: Այսինքն՝ մենք այսօր ունենք իրավիճակներ, երբ կարող է Հայաստանի Հանրապետությունում դիմորդն ընդունվել բուհ, ավարտել բուհը, դիպլոմավորվել եւ այդպես էլ որեւէ առարկայական առնչություն չունենալ իր մասնագիտության եւ բովանդակության հետ: Մեր ռազմավարության կարեւոր բաղադրիչներից է հետազոտական եւ բուհական բաղադրիչները մեկտեղել այնտեղ, որտեղ այն անհրաժեշտ է եւ տրամաբանական: Դուք գիտեք, որ ակադեմիական քաղաքի շրջանակում մենք արձանագրել ենք, որ Հայաստանի Հանրապետությունում պետք է ունենանք մինչեւ 8 լիարժեք, ամբողջությամբ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող բուհ: Այդ բուհերը պետք է ձեւավորվեն ոչ միայն բուհական, այլեւ հետազոտական բաղադրիչների հիման վրա: Առաջիկայում ենթադրում եմ, որ մենք կարող ենք նախապատրաստական աշխատանքներ իրականացնելուց հետո այս առաջարկն արտապատվիրակել հենց բուհերին եւ հետազոտական հաստատություններին՝ նրանց առաջարկելով սկսել քննարկումներ իրենց համատեղ ապագան կառուցելու վերաբերյալ»,-ասել է վարչապետը:

ԶԵԿՈՒՅՑԸ

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ

Amnesty International միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հրապարակել է «Աշխարհում մարդու իրավունքների վիճակը 2022-2023» զեկույցը, որտեղ ներկայացված են 156 երկրների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները: Տվյալներ կան ներկայացված նաեւ Հայաստանի մասին:

Զեկույցում նշված են Հայաստանի վերաբերյալ հիմնական արձանագրումները, ըստ որի՝ իրավապահները չափից ավելի ուժ են կիրառել կառավարության դեմ ուղղված բողոքի ցույցերի ընթացքում:

Մյուս արձանագրությամբ նշվում է, որ հանքարդյունաբերության վերաբերյալ օրենսդրությունում կատարվել են այնպիսի փոփոխություններ, որոնք ավելի են հեշտացրել շրջանցելու համար հանրային դիմադրությունն ու բնապահպան մտահոգությունները:

Զեկույցում նշվում է, որ շարունակում է հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով անվտանգային լարված իրավիճակը՝ հաճախակի փոխհրաձգություններով:

Ադրբեջանի հրետակոծությունները հարվածներ են հասցրել Հայաստանի բուն տարածքին՝ Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերին, ինչի հետեւանքով ավելի քան 200 մարդ է զոհվել, այդ թվում՝ երկու քաղաքացիական անձ:

Հոկտեմբերին Ադրբեջանը եւ Հայաստանը համաձայնության են եկել իրենց սահմանի երկայնքով Եվրամիության մշտադիտարկման առաքելության կարճաժամկետ տեղակայման շուրջ:

Ոչ մի էական առաջընթաց չի արձանագրվել 2020 թվականի հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում եւ դրանից անմիջապես հետո կատարված պատերազմական հանցագործությունների եւ միջազգային մարդասիրական իրավունքի այլ խախտումների հետաքննության կամ ենթադրյալ հանցագործներին պատասխանատվության ենթարկելու հարցում:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օգոստոսին հրապարակած զեկույցի համաձայն՝ 2020-ի մարտից ի վեր ավելի քան 300 հայեր անհետ կորած են մնում կամ հաշվառված չեն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»-Ն ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը 2023 թվականի մարտի 23-ին վերահսկողություն է իրականացրել Երեւանի Արշակունյաց 15 հասցեում գտնվող «Երեւանի պահածոների գործարան» փակ բաժնետիրական ընկերությունում («Սուրմալու» տոնավաճառ) նախկին վերահսկողության արդյունքում տրված կարգադրագրի պահանջների կատարումը պարզելու նպատակով:

Ըստ այդմ՝ Տեսչական մարմնի հրդեհային անվտանգության մասնագետները պարզել են, որ ընկերությունում իրականացվել են մեծածավալ աշխատանքներ, որի արդյունքում էապես նվազել է հրդեհի առաջացման սպառնալիքը, եւ վերացել է ընկերության գործունեությունը մասնակի կամ ամբողջովին դադարեցնելու հիմքը:

Առկա հանգամանքների ուսումնասիրության արդյունքում ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի կողմից մարտի 30-ին որոշում է կայացվել թույլատրել «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի գործունեությունը: Միեւնույն ժամանակ ընկերության տնօրենին տրվել է կարգադրագիր, որով սահմանվել է հստակ ժամանակացույց՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների դեռեւս առկա խախտումները սեղմ ժամկետներում վերացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇՎԵԼ Է ՕՏԱՐԵԼ ԱՃՈՒՐԴՈՎ

Կառավարության երեկվա նիստում որոշում կայացվեց պետական սեփականություն հանդիսացող, քաղաք Երեւան, Արաբկիր, Կիեւյան փողոց 16 շենք, 9/2 տարածք հասցեում գտնվող 68 քմ մակերեսով եւ 169.9 քմ մակերեսով ընդհանուր մաս հանդիսացող անշարժ գույքը, ինչպես նաեւ շենքի զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար հատկացված 3278 քմ մակերեսով հողամասից 68/6703 բաժնեմաս հանդիսացող 33.2 քմ մակերեսով հողամասն օտարել դասական աճուրդով: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ այդ հասցեում գտնվող գույքը հանդիսանում է հասարակական նշանակության շենք, որից իրականացվել են մասնակի օտարումներ, եւ ներկայումս նշված շենքում ՀՀ սեփականություն է հանդիսանում շենքից մեկ եւ կես հարկ: Օտարման առաջարկվող սենյակները փաստացի չեն շահագործվում որեւէ սուբյեկտի կողմից: Աճուրդով օտարման ենթակա գույքի մեկնարկային գինը՝ գնահատված արժեքի 100 տոկոսի չափով՝ 73,93 մլն դրամ: Գնորդը պարտավոր է վճարել նաեւ գույքի արժեքի որոշման դիմաց գանձվող գումարը՝ 156 192 դրամը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՏԿԱՑՎԵՑ 23,5 ՄԼՆ ԴՐԱՄ

ԴՈՆՈՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԵՆ

Կառավարությունն իր մարտի 30-ի նիստում 2023 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին որոշում կայացրեց:

Ներկայացվող նախագծի նպատակը զոհված զինծառայողների ծնողների վերարտադրողական առողջությանն աջակցելու նպատակով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության եւ սպասարկման որոշ ծախսերի մասնակի փոխհատուցում տրամադրելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովումն է՝ 2023 թվականի առաջին եռամսյակի համար:

Խոսքը փոխնակ մոր ծառայության եւ դոնորական ձվաբջջի համար ծախսերը մասնակի փոխհատուցելու մասին է:

Փոխհատուցման չափերը հետեւյալն են՝ փոխնակ մոր ծառայությունից օգտվելու համար պայմանագրով նախատեսված վճարի 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 5,5 մլն դրամը, եւ դոնորական ձվաբջջի ձեռք բերման համար՝ այդ ծառայության համար պայմանագրով նախատեսված վճարի 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան 600 հազար դրամը:

Ներկայումս Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն արդեն իսկ միջոցառման 1 շահառուից ստացել է դիմում՝ փոխնակ մոր ծառայություններից օգտվելու ծախսերը մասնակի փոխհատուցելու համար, ինչպես նաեւ ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել են գրություններ՝ միջոցառման 10 շահառուների համար դոնորական ձվաբջջի ձեռք բերման ծախսերը փոխհատուցելու համար:

Կանխատեսվում է, որ 2023-ի առաջին եռամսյակում փոխհատուցում ստանալու համար շահառուների ընդհանուր թիվը կկազմի 31 ծնող, որոնց համար 30 դոնորական ձվաբջիջի ձեռք բերման եւ 1 փոխնակ մոր ծառայություններից օգտվելու համար մասնակի փոխհատուցման անհրաժեշտ գումարը կազմում է 30x600,000+1 x 5,500,000=23,500,000 դրամ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի պետական բյուջեով միջոցառման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, 2023 թվականի առաջին եռամսյակում վճարումներն ապահովելու համար հարկ կլինի հատկացնել 23.5 մլն դրամ:

Ներկայացված նախագծով առաջարկվում է ՀՀ 2023-ի պետական բյուջեով նախատեսված ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված ֆինանսական միջոցների հաշվին հատկացնել 23.5 մլն դրամ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում, որպես մեկ միասնական համալիր, վաճառվելու են «Հայաստանի Զարգացման եւ Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 5 փողոց, 1/1 հասցեում գտնվող 655,75 ք.մ. հին ձուլման արտադրամաս, 209,15 ք.մ. փայտամշակման արհեստանոց, 15,3 ք.մ. գազակարգավորիչ կայան, 301,65 ք.մ. կիսակառույց պահեստ, 111,2 ք.մ. ծածկ, 27,4 ք.մ. /79,46 խմ/ պարիսպ, 6,18 ք.մ. ինքնակամ շինություն եւ 0.4546 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14800000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5 հասցեում գտնվող 1882,1 ք.մ. վարչական շենք, 73,44 ք.մ. ավտոտնակ, 150,45 ք.մ. ջրավազան, 324,08 ք.մ. զոդման արտադրամաս, 32,5 ք.մ. ջրավազան, 4919,9 ք.մ. մեխանիկական ցեխ, 147,4 ք.մ. մազութի հոր, 84 ք.մ. մազութի հոր, 400,22 ք.մ. կաթսայատուն, 3217,2 ք.մ. ձուլման արտադրամաս, 1489,6 ք.մ. կենտրոնական պահեստ, 93,5 ք.մ. կիսակառույց, 24,64 ք.մ. ենթակայան, 644,6 ք.մ. դարբնոց, 576 ք.մ. գործիքային արտադրամաս, 8,5 ք.մ. /17 խ.մ./ պարիսպ, 29,3 ք.մ. /73,3 խ.մ./ պարիսպ, 85,5 ք.մ. /256,5 խ.մ./ պարիսպ եւ 4,4457 հա հողամաս: Առկա են 69,17 ք.մ. ինքնակամ կառուցված շինություններ՝ 48,9 ք.մ. կիսակառույց, 5,77 ք.մ. պահակատուն եւ 14,5 ք.մ. պարիսպ: Լոտի մեկնարկային գինը՝ 303900000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5/1 հասցեում գտնվող 826,9 ք.մ. կուլտուրայի տուն, 119,95 ք.մ. անասնաշենք, 33,2 ք.մ. /116,2 խ.մ./ պարիսպ, 21 ք.մ. /16,8 խ.մ./ պարիսպ, 33,1 ք.մ. /82,8 խ.մ./ պարիսպ եւ 0,5252 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23200000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5/2 հասցեում գտնվող 990,1 ք.մ. անավարտ պահեստ, 107,7 ք.մ. պատրաստի արտադրանքի պահեստ, 17,1 ք.մ. /51,3 խ.մ./ պարիսպ, 41,3 ք.մ. /123,9 խ.մ./ պարիսպ եւ 0,3521 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13800000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5/3 հասցեում գտնվող 592,2 ք.մ. վարչական շենք, 960,21 ք.մ. ջերմոց, 97,9 ք.մ. /293,71 խ.մ./ պարիսպ, 4,2 ք.մ. /12,6 խ.մ./ պարիսպ, 5,0 ք.մ. ինքնակամ կառուցված պարիսպ եւ 0,7119 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23700000 ՀՀ դրամ:

Նշված գույքերը հանձնված են վարձակալության մինչեւ 13.07.2023 թվականը:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.04.2023թ.-ին, 18.04.2023թ.-ին եւ 19.04.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՏԵՐ

Creative Armenia ՀԻՄՆԱԴՐԱՄԻ Artbox Hub ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի ստեղծարար արդյունաբերության եւ մշակույթի ոլորտների խրախուսմանն ուղղված «Կատաղուլս» ստեղծարար ակսելերացիոն ծրագրի շրջանակում մեկնարկում է Artbox Hub ծրագիրը: Նախագիծն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա:

Ծրագիրը ստեղծվել է Creative Armenia հիմնադրամի կողմից եւ իրականացվում է Հայաստանում Եվրոպական միության ֆինանսավորմամբ, ՀԲԸՄ Հայաստանի հետ համագործակցությամբ: Artbox Hub-ը միտված է խթանելու Հայաստանում մշակութային հաստատությունների գործունեությունը՝ ընտրված հաստատություններին տրամադրելով 50 հազար եվրոյի չափով դրամաշնորհ՝ ակտիվացնելու ստեղծարար կենտրոնները: Artbox Hub-ը 8-շաբաթյա առցանց ծրագիր է՝ Հայաստանում ստեղծարար ոլորտներում գործող մշակութային հաստատությունների համար:

Ծրագրի միջոցով մասնակից հաստատություններին հնարավորություն կընձեռվի տարածքը վերածել համայնքային ներկայանալի մշակութային կենտրոնի: Աշխատելով առաջատար մենթորների եւ միջազգային մշակութային հաստատությունների առաջնորդների հետ՝ մասնակից կազմակերպությունները կվերամաստավորեն իրենց մոտեցումը՝ մարքեթինգի, հաճախորդների ակտիվացմանն ու եկամտի մոդելների բարելավման առումով: Նրանք կմշակեն տարածքներին նոր շունչ հաղորդելու, հասանելի եւ հետաքրքիր մշակութային կենտրոններ ստեղծելու ռազմավարություն:

Ծրագրի ավարտին հաստատությունները կներկայացնեն տարածքները մշակութային ստեղծարար կենտրոնների վերածելու նախագծերը. կընտրվեն լավագույն 3-ը, որոնք կստանան դրամաշնորհ ու բրենդավորման աջակցություն՝ ծրագիրը կյանքի կոչելու համար: Artbox Hub ծրագրի իրականացման նպատակով ընդունվում են հայտեր ստեղծարար այն հաստատություններից, որոնք գործունեություն են ծավալում Հայաստանի Հանրապետության սահմաններում եւ ցանկանում են առավելագույնի հասցնել իրենց համայնքի ներգրավումը, եկամուտները եւ տեսանելիությունը:

Ծրագիրը նախատեսված է ստեղծարար բոլոր ոլորտներում գործող կազմակերպությունների եւ տարածքների համար, որոնք կարիք ունեն մշակելու նոր մոտեցումներ համայնքներում եւ արվեստի ոլորտում ավելի ներգրավված, ակտիվ ու կայուն ներկայություն հաստատելու նպատակով: Artbox Hub-ը ինկուբատորի եւ աքսելերատորի մոդելների վերակերտումն է՝ կոչված տրամադրելու ռազմավարական աջակցություն եւ ֆինանսավորման ուղիներ արվեստի բոլոր ոլորտներում գործող անհատներին, նախագծերին եւ կազմակերպություններին: Մի շարք ժամանակակից ծրագրերի միջոցով Artbox Hub-ը զարգացնում է առեւտրային կենսունակություն, լսարանի աճ եւ ներդրումային ստեղծագործական արտադրանքներ: Ծրագրին դիմելու վերջնաժամկետը 2023 թվականի ապրիլի 28-ն է:

ՍՑԵՆԱՐ

ՏԱՐԱՆՏԻՆՈՆ ԱՎԱՐՏԵԼ Է

Հոլիվուդյան հայտնի ռեժիսոր, սցենարիստ, պրոդյուսեր եւ դերասան Քվենտին Տարանտինոն հայտարարել է, որ ավարտել է իր վերջին ֆիլմի սցենարը:



Այս մասին հաղորդում է France 24 պարբերականը: Ակնկալվում է, որ Տարանտինոն իր 10-րդ ֆիլմի նկարահանումները կսկսի մի քանի ամսից: «Ես ավարտել եմ մի սցենար, որը կդառնա իմ վերջին ֆիլմը: Կարծում եմ՝ մենք, ամենայն հավանականությամբ, այն կնկարահանենք աշնանը», - ասել է 60-ամյա կինոռեժիսորը Կաննի կինոփառատոնի նախագահ Թիերի Ֆրեմոյի հետ զրույցում: Ռեժիսորը հավելել է, որ ֆիլմը կոչվում է «Կինոքննադատ»: Դրա պատմությունը ծավալվում է 1977 թ.-ին: Ավելի վաղ տեղեկություններ էին տարածվել, թե պատմությունը կարող է կենտրոնացած լինել 2001 թ.-ին մահացած Պաուլին Կաելի շուրջ, որը համարվում է բոլոր ժամանակների ամենաազդեցիկ կինոքննադատներից մեկը, սակայն Քվենտին Տարանտինոն հերքել է այդ լուրերը՝նշելով, որ իր ֆիլմը նվիրված չէ որեւէ կոնկրետ կինոքննադատի: Տարանտինոյի դեբյուտային ֆիլմը եղել է 1992 թ.-ին էկրան բարձրացած «Կատաղած շներ»-ը, որը նրան մեծ համբավ բերեց: Վերջին 3 տասնամյակների ընթացքում կինոռեժիսորը նկարահանել է այնպիսի հայտնի ֆիլմեր, ինչպիսիք են «Քրեական ընթերցվածք»-ը, «Մի անգամ Հոլիվուդում»-ը, «Անփառունակ սրիկանները»: Նա աշխատել է այնպիսի դերասանների հետ, ինչպիսիք են Լեոնարդո Դի Կապրիոն, Բրեդ Փիթը, Ջոն Տրավոլտան, Ուման Թուրմանը, Սեմյուել Լ. Ջեքսոնը: Նրա ֆիլմերի շնորհիվ Քրիստոֆ Վոլցը երկու «Օսկար» է շահել: Տարանտինոն բազմիցս նշել էր, որ ցանկանում է իր կյանքի ընթացքում նկարահանել 10 ֆիլմ կամ թոշակի անցնել մինչեւ 60 տարեկանը: Ռեժիսորն արդեն նկարահանել է 9 ֆիլմ (եթե «Սպանել Բիլին» ֆիլմը համարենք 1 ֆիլմ), իսկ մարտի 27-ին դարձել է 60 տարեկան:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՃՈՒՐԴԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2023թ. Մարտի 30-ին Սերժիկ Մկրտչյանի սնանկության գործով աճուրդը չի կայացել հայտ չլինելու պատճառով.

2023թ. Ապրիլի 26-ին, ժամը 12:30 ք.Երեւան, Արշակունյաց պողոտա 5, 311 սենյակ հասցեում նշանակված է Սերժիկ Մկրտչյանի սնանկության գործով պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքի բաց դասական եղանակով աճուրդ-վաճառքը մեկ լոտով: Աճուրդի ներկայացված գույքի արժեքը 10% նվազեցվել է նախորդ աճուրդի մեկնարկային գնից:

Լոտ 8. ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ համայնք, Ն. Շենգավիթ, 11 փող, թիվ 1 հասցեյում գտնվող անշարժ գույք /սեփականության վկայական՝ 1516030/: Մեկնարկային գինը՝ 243,540,000 ՀՀ դրամ: Գույքն իրենից ներկայացնում է մեկ հարկանի Ջերմաքարշի կայան /ըստ սեփ վկայականի մակերեսը՝ 215 ք.մ. է/ որը տեղակայված է 9,000 ք.մ. հողամասի: Շինությունը գտնվում է միջին վիճակում եւ չի օգտագործվում իր նշանակությանը համապատասխան:

Գնահատման վեց բալանոց համակարգում ներքին հարդարման ցուցանիշի համապատասխանում է 1-ին /ամենավատ/

կատեգորիաին: Կոմունիկացիաներ՝ էլ. մատակարարում, ջրամատակարարում, կոյուղի:

Հողամասում առկա է եւս մեկ հին (շատ վատ վիճակում գտնվող) շինություն, որը վկայականում նշված չէ, չկա նաեւ դրա վերաբերյալ չափագրում: Այդ շինության արժեքը ներառված չէ գնահատման արդյունքներում:

Հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, որը գնահատման պանին կազմում էր՝ 145,589,400 ՀՀ դրամ:

Կադաստրային արժեքի վճարման պարտականությունը կրում է գնորդը:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն ա)ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռներեցների դեպքում դրանց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, բ) աճուրդի մասնակցության եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը, մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են մեկնարկային գնի 1 % /բայց ոչ ավել քան 200,000 ՀՀ դրամ/ եւ 5 % համապատասխանաբար: Մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի 220460442647000 հ/հ-ին մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00 ներառյալ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրվան նախորդող 5 օրվա ընթացքում ընդհուպ մինչեւ աճուրդի նախորդ օրվա ժամը 16:00 կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան, հասցե՝ (ՀՀ ք. Երեւան, Օտյան 53/2): Աճուրդում հաղթող մասնակից է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գույքի մասին այլ տեղեկություններ ստանալու ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են զանգահարել Սերժիկ Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ՝ Էդուարդ Սերոբյանին 077-64-22-00 հեռախոսահամարով:

● *Ապրիլի 1-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Կարմիր գլխարկը» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500 դրամ: Սկիզբը՝12:30-ին, 14:00-ին, 15:30-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ դեպի ԵԱՏՄ եւ այլ երկրներ բուսական ծագման մթերքի արտահանման համար:

Ստեփան Հակոբյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանվող բուսական ծագման մթերքը պետք է լինի փաթեթավորման նյութի՝ արկղերի մեջ, յուրաքանչյուրի վրա հստակ մակնշմամբ, որը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունը՝

ծագման երկիրը; ապրանքի անվանումը; արտադրողի անվանումը եւ հասցեն; արտահանողի անվանումը եւ հասցեն; ստացողի անվանումը եւ հասցեն; պահման ժամկետը, ջերմաստիճանը: Արտահանվող խմբաքանակը պետք է զերծ լինի ցանկացած տեսակի կարանտին վնասակար օրգանիզմներից: Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտահանվող թարմ պտուղ-բանջարեղենի խմբաքանակի մաքսային ձեւակերպումների համար անհրաժեշտ է ունենալ հետեւյալ փաստաթղթերը՝ արտահանման հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր; արտահանման հաշիվ-ապրանքագրում նշվում են ապրանքն արտահանողի եւ ստացողի անվանումները, հասցեները, ՀՎՀՀ-ն, ապրանքի նկարագիրը, քանակը, քաշը, արժեքը; տրանսպորտային փաստաթղթերը - CMR; ապրանքների ձեռք բերման փաստաթուղթ, բացակայության դեպքում՝ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը; ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրվող անվտանգության կամ ֆիտոսանիտարական հավաստագիր, որը խմբաքանակի վերը նշված փաթեթավորման եւ մակնշման պահանջների ապահովման եւ կարանտին վնասակար օրգանիզմներից զերծ լինելու դեպքում տրամադրվում է արագացված ընթացակարգով՝ 20 րոպեում; խմբաքանակի առեւտրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա անհրաժեշտ է նշել «Òîâàðû Åâðàçèéñêîãî ýêîíîìè÷åñêîãî ñîþçà»՝ հաստատված հայտարարատուի կողմից; ապրանք ստացող կողմը պարտադիր պետք է լինի ԵԱՏՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ համաձայն ԵԱՏՄ անդամ ներմուծող երկրի կողմից ներկայացված պահանջի:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ այլ երկրներ արտահանելիս ներմուծող երկրի պահանջի դեպքում անհրաժեշտ է ունենալ նաեւ արտադրանքի ծագման երկրի հավաստագիր, որը տրամադրվում է ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի կողմից առանց փորձաքննության դիմումի ստացման օրվանից հետո՝ 1-օրյա ժամկետում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որտեղ պետք է դիմի քաղաքացին ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն ստանալու համար:

Ռիմա Գեւորգյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը, մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)՝ ներկայացնելով դիմում-հայտարարագիր, ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար իր ընտանիքի անապահովության բնութագրիչների մասին ամբողջական տվյալները հավաստող փաստաթղթեր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Տանձուտ գյուղում

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները վերահսկողական կանխարգելիչ միջոցառումների ընթացքում Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տանձուտ գյուղի վարչական տարածքում հայտնաբերել են ավազի ապօրինի արդյունահանման դեպք: Տեսուչներն անհապաղ դադարեցրել են ծանր տեխնիկայով ավազակոպճային խառնուրդի ապօրինի արդյունահանման աշխատանքները:

Համապատասխան նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 4 - 9	0 - 5
Կոտայքի լեռներ	-2 - 5	0 - 3
Կոտայքի նախալեռներ	0 + 2	+4 + 6
Գեղարքունիք	0 - 4	0 - 3
Լոռի	- 1 + 5	- 2 + 1
Տավուշ	+ 1 + 4	0 + 5
Արագածոտնի լեռներ	- 3 - 6	0 - 3
Արագածոտնի նախալեռներ	0 + 4	+ 5 + 8
Արարատ	+ 4 + 7	+ 9 + 12
Արմավիր	+ 3 + 5	+ 12 + 14
Վայոց ձորի լեռներ	- 1 - 3	0 + 2
Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 7	+ 8 + 11
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5	+ 4 + 8
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3	- 2 + 2
Արցախ	+ 2 + 6	+ 5 + 8
Երեւան	+ 5 + 8	+ 8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.03.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*